

### ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ ԵՒ "ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ"

Իւրաքանչիւր տարւում Մարտի 21-ին, կարեւոր երկու առիթներ կը նշուին մարդկութեան կողմէ:

Արդարեւ, այդ օր կը գուգտիսի ամենագեղեցիկ եղանակի՝ ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ-ին: Ծառ հաճելի օր, ծաղիկներ ու կանաչություն, յոյսի ներշնչում եւ յաստատություն կը դիմաւորեն մեզ այս օրերուն:

Նմանապէս, աշխարհի մեծ թիւով երկիրներու մէջ, 21 Մարտին կը տօնուի "ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ"-ը: Լիբանանի եւ արաբական աշխարհի մէջ այս օրը կը նշուի այդ տօնը: Անոնց շարքին, մեր հայ հայրենակիցներէն ու մանր, տեղացիներուն հետ, կը պատուեն իրենց մայրերը, մինչ նորիցէն Մայիսին կը կատարեն այդ յարգանքի տուրքը:

Մարտին թէ՛ Մայիսին, նպատակը նոյն է: Բարի գարնանամտի կողքին, եւ քաջանորջութիւն, երջանկութիւն ու երկար կեանք մաղթելով, վարձքերնիդ կատար, կ'ըսենք մեր թանկագին մայրերուն:

### ԳԱՐՈՒՆԸ ԾԱՂԿԱԾ Է

Հեռուն պէտք չկայ նայելու, տեսնելու համար գարնան նշանները: Օդի ջերմացումը, ծառերը եւ իրենց պսակները տեղեկութիւն դուրս եկող կենդանիները փաստ են, որ վերածնունդի խոստում մը կայ գարնանային այս օդին մէջ:

Մարտ 21-ը ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ է: Այս շրջանին արեւը ուղղակիօրէն կը բազմի էքուաթոր գիծին վրայ: Անշուշտ արեւը չէ շարժողը, այլ՝ Երկիր մոլորակը: Երբ երկիրը արեւուն շուրջ կը դառնայ, վերի կէտը, որ հիստապին կիսագունդ կը կոչուի, կը թեքի դեպի արեւուն կողմը, երբ ձմեռը կը վերածուի գարնան: Մինչ այդ, վարի կէտը, որ հարաւային կիսագունդ կը կոչուի, արեւուն հեռուն կը թեքի: Մեզի համար Գարնան սկիզբը Աւստրալիոյ, Հարավային Ամերիկայի եւ Հարավային Աֆրիկէի բաժիններուն մօտ աշնան սկիզբն է:

Արեւածագն ու արեւամուտը մօտ 12 ժամ հեռու կ'ըլլան իրարմէ երկրագունդին ամէն կողմերը: Այս պատճառով, շատեր կը կարծեն, թէ ցերեկն ու գիշերը հասարակ երկարութիւն ունին Մարտ 20-ին: Բայց, իրականութեան մէջ, ցերեկը քիչ մը ավելի երկար կ'ըլլայ գիշերէն այս թուականին: Այս երեւոյթը ունի մի քանի պատճառներ. արեւածագը կ'ըլլայ երբ արեւուն վերի բաժինը (ոչ թէ մէջտեղի բաժինը) հորիզոնին վրայ է: Բայց արեւը կը թափ հորիզոնին վրայ ըլլալ մինչ, իրականութեան մէջ, տակաւին հորիզոնին տակն է, որովհետեւ երկրագունդին մթնոլորտը կ'արձակէ արեւէն եկող շողերը, հետեւաբար, մենք արեւը կը տեսնենք հորիզոնին վրայ ելլելէն մի քանի վայրկեան առաջ: Արեւամուտէն ետք գոյատեւող լուսատու ժամանակը եթէ ավելցնենք, պիտի գտնենք, որ ցերեկը մի քանի վայրկեաններով ավելի երկար է գիշերէն:

Սաստիկ եղանակ մը կը տիրէ Գարնան ընթացքին, երբ ջերմ օդը կը սկսի արշաւել երկրագունդի ցած տարածութիւններէն, մինչ պաղ օդը տակաւին կը հրէ բեւեռային շրջաններէն: Հեղեղները շատ հասանակաւ են լեռնային շրջաններուն մօտ տարուան այս շրջանին, մանաւանդ որ այդ ձիւնահալերը շատ անգամներ կ'արագանան ջերմ անձրեւներուն պատճառով: Գարունը կը նկատուի անմահ, վերածնունդի, վերածնունդի թէ՛ բոյսերուն եւ թէ կենդանիներուն երեւոյթներ, եւ կեանքի շրջանը անգամ մը եւս սկիզբ կ'առնէ:



րականութեան: Հոգին կը գարթնի ձմրան քունէն (լուսահատութենէն) եւ կ'ընդունէ զանազան մակարդակներու վրայ սնունդ: Արեւուն ջերմութիւնն ու լույսը (Աստուած) մեր մէջ կ'արթնցնէ որոշ բաներ եւ միաժամանակ նոր առաքելութիւն մը աստիճանաբար կը սկսի: Արեւուն լույսով լուսատուած օրուն յաւելեալ ժամերը յառաջ կը մղեն հոգիները կատարելու անհրաժեշտ փոփոխութիւնները: Այս ներքին մղում մըն է, գտնելու միջոց մը՝ գոյատեւելու մեր այս իրականութեան մէջ, դիմադրելով փոփոխութիւն կրող ու ժաբանութեան:

## ՄԵՐ ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՅՐԵՐՈՒ "ՕՐ"-ՈՒՆԱՆ ԱՌԻԹՈՎ

Ձանագան երկիրներ Մայրերու Օրը կը տօնեն տարբեր թուականներով, որովհետեւ այդ օրը ունի տարբեր ծագումներ: Ծառեր կը խորհին, թէ այդ տօնը նմանող առած է հին յունական սովորութենէ, երբ անոնք մայրեր կը պաշտէին եւ ի մասնատրի՝ յոյն չաստղաճանաչներու հօգ օր մայրը: 1600-ական թուականներուն, Անգլիան կը տօնէր "Մայրացումս կիրակի"-ն, գոր կը կատարէին Քառասներորդ Գահին 4-րդ կիրակին եւ որուն ընթացքին կը պատուէին Անգլիոյ մայրերը:

Միացեալ Նահանգներուն մէջ, Մայրերու Օրը առաջին անգամ առաջարկուած էր 1872 թուականին, որպէս խաղաղութեան նուիրում օր մը: 1907 թուականին, Ֆիլադելֆիա շրջանէն Աննա Մարիա արշաւ մը սկսաւ կազմակերպել հիմնելու Մայրերու ազգային տօն մը: Յաջորդ տարի, Մայրերու Օրը կը տօնուի Ֆիլադելֆիոյ մէջ: Աննա Մարիայի թէ իր կողմնակիցները կոչ ուղղեցին նախարարներու, առեւտրական ու քաղաքական մարդոց, ներկայացնելով մայրերու ազգային տօն մը

դառն ու ծանր պահերուն համար մեր մանկութեան եւ պատանեկութեան շրջանին:



Հետեւեալ տողերուն մէջ կը ներկայացնենք յիշատակի արժանի խօսքեր, մայրերու նուիրում:

• Մայր ըլլալը քեզ կը վերածէ բոլոր պատիկներուն մայրը: Այլեւս իւրաքանչիւր վիրաւորում, լքում եւ վախճան պատիկ քու զաւակը է: Կ'ապրիս բոլոր ազգերու տառապող մայրերուն մէջ ու

կ'արտաքսուիս անոնց հետ: Կը ձգտիս հանգստացնել բոլոր անոնց որոնք միաթարութեան պէտք ունին:

(ԵՍԵՆՆԱԿ ԿՐԷՅ)

• Թոյլ տուէք որ Ֆրանսան ունենայ լաւ մայրեր, եւ ան պիտի ունենայ լաւ զաւակներ:

(ՆԱՓՈՒԼԷՆ ԳՈՆԱՓԱՐԹ)

• Ջառակ ունենալու որոշումը սուներ շատ կարեւոր է: Այդ կը նշանակէ յափտեան որոշում առած ըլլալ ձգելու, որ սիրտդ մարմնիդ շուրջ ըլլայ:

(ԷԼԻՅԱՊԵՆՆԱԿ ՍԹՈՆ)

• Մայրը մեր ունեցած ամէնէն անկեղծ բարեկամն է: Երբ ծանր ու անըստ պատիւ փորձութիւններու հանդիպուիք, երբ հակառակութիւնը կը փոխարինէ բարգաւաճման, երբ մեր արեւածագին ընթացքին մեզի հետ ուրախացող մեր ընկերները կը լքեն մեզ դժուարութեան պահերուն, ան մեր կողքին կը մնայ եւ իր ազնիւ պատուէրներով ու խորհուրդներով կը նկրտի փարատել մոլոր ամ-

պերը, եւ խաղաղութիւնը կը վերադարձնէ մեր սրտերուն:

(ՈՒՍԵՆՆԱԿ ԿՐԷՅ)

• Ես ինչ որ եմ եւ կը ձգտիմ ըլլամ, կը պարտիմ իմ հրեշտակ մօրս:

(ԱՐԲԱՆՆԱԿ ԼԻՆԿՈՒՆ)

• Մօր սիրտը զաւակին դասարանն է:

(ՀԷՆՐԻ ՈՒՈՐՏ ԳԻՉԸՐ)

• Մայրս ամէնէն գեղեցիկ կինն է, գոր տեսած եմ: Ամէն ինչ կը պարտիմ մօրս: Կեանքիս բոլոր յաջողութիւնները կը վերագրեմ մօրմէս ստացած բարոյակաւ, մտային ու ֆիզիքական դաստիարակութեան:

(ՃՐՈՐ ՈՒՍԵՆՆԱԿ ԿՐԷՅ)

• Լաւագոյն ակադեմիան մօր ծնունդն է:

(ՇԷՅՋՄ ՌԱՍՍԸԼ ԼՈՈՒԷԼ)

• "Պատուէ քու հայրդ ու մայրդ, որպէսզի քու օրերդ երկայն ըլլան այն երկրին վրան, գոր քու Տէր Աստուծոյ կու տայ քեզի":

(ԵԼԻՅ 20:12)



## ՌԱԺԱ՝ ՀԻՆՏՈՒ ԴՊՐՈՑԻ ԱԾԱԿԵՐՏԸ

Ռաժա տարբեր տարեկան է: Ան հրեղիկ է եւ կ'ապրի Հնդկաստանի հարաւը: Անոր դպրոցին մէջ աշակերտները գիշերօթիկ են եւ կ'ապրին ըստ իրենց հիմնու կրօնին սկզբունքներուն:

### ԲՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՆԵՐԳԱՇՆԱԿ

Դպրոցը կը կոչուի Խաղաղութեան տունը: Ան շինուած է գետի մը ափին, անտառի մը մէջ, ուր կ'ապրին փիղեր, յովազներ, օձեր... Բնութեան կշռոյթին հետ ապրելու համար Ռաժա եւ իր ընկերները կ'արթնան արեւուն հետ:



Օրը կը սկսի խոկունի գիտակցով մը: Բնութեան մէջ անկիւն մը նստած՝ իւրաքանչիւրը կը փորձէ ներդաշնակութիւն գոյն գինք շրջապատող բնութեան հետ:

### ԵՆՈՎԱՅԻ ԴԱՍԸ

Պաղ ջուրով լուացուելէ ետք աշակերտները կ'երթան իրենց ետկայի ուսուցիչին մօտ: Ետկան մարգարէի ձեռքին մըն է, որ կարելիութիւնը կու տայ հանդարտելու եւ հանգստացնելու մարմինն ու միտքը: Աշակերտները տար-

բեր ձեւեր կ'ընեն խորունկ շնչելով:

### ՍՈՒՐԲ ԳԻՐԲԵՐՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Հինտու անաղութիւններուն մէջ "Կորուն" այն ուսուցիչն է, որ աշակերտներուն ուղղութիւն կու տայ սուրբ գրութիւններու ուսումնասիրութեան աշխատանքներուն մէջ: Հինտու կրօնին մէջ գոյութիւն ունին հինգ սուրբ գիրքեր: Ջանքեր կարողալու համար Ռաժա սորված է սանքրիտ լեզուն: Սանքրիտը շատ հին լեզու մըն է, որ այսօր այլեւս չի գործածուիր:

### ԾԱԾ

Ծաշի ժամանակ աշակերտներն ու ուսուցիչները կը հաւաքուին ճաշարահին մէջ: Անոնք շրջանակ կազմած՝ գետին կը նստին: Անոնց ուտելիքը պարզ է եւ բնական: Գլխաւոր ճաշը յաճախ պատրաստուած կ'ըլլայ բրինձով կամ ոսկով. հիմնուները բնաւ միս կամ ձուկ չեն ուտեր:

### ԴԱՍ՝ ԿԷՍՕՐԷ ԵՏԳ

Կրօնական դաստիարակութեան յատկացումը ցերեկէն ետք, կէսօրէ ետքերը յատկացում են դպրոցական միջոցներու, ինչպէս՝ գիտութիւն, պատմութիւն, անգլերէն: Որովհետեւ, երբ Ռաժա եւ իր ընկերները Խաղաղութեան տունէն շրջանաւարտ ըլլան, եօթը տարի ետք անոնք պիտի կարենան իրենց ուսումը շարունակել հնդկական համալսարաններուն մէջ:

### ՎԵՐՋԱՊԷՍ ԶՐՈՍԱՆՔ

Դասերով լեցուն օրէ մը ետք, վերջապէս մարգարէի եւ խաղերու ժաման-



ակը հասաւ: Ռաժա կը միանայ քարաթի խումբին: Ուրիշ աշակերտներ կը նախընտրեն քրիքէթի մրցում մը խաղալ. այս մարզաձեւը շատ ժողովրդական խաղ մըն է Հնդկաստանի մէջ: Իրիկունս աղօթքէն ետք, մանուկները քանակաւ պիտի երթան արեւուն վերջին ճառագայթներուն հետ:

### ՌԱԺԱՅԻՆ ՏԱՐԱԶԸ

Երբ տաճար կու գայ աղօթելու, Ռաժա իր աչքերուն միջեւ գծիկ մը կը գծէ մոխիրով: Օրհնումս պարան մը կը կապէ իր փորին վրայ եւ կ'անցնէ ուսին վրայէն: "Տոբին" երկար եւ ճերմակ կերպարի կտոր մըն է, որ կը փաթթուի մարմնին շուրջ:

## ՄԱՐԴՈՒՆ ԵՐԵՔ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Մարդ մը կար, որ երեք բարեկամներ ունէր: Ան իր բարեկամներէն երկուքը շատ կը սիրէր, իսկ երրորդին հանդէպ անտարբեր էր, հակառակ անոր, որ իր երրորդ բարեկամը ավելի կ'ապրած էր իրեն:

Օր մը այս մարդը ամբաստանուեցաւ մեծ ոճիր մը գործած ըլլալու յանցանքով: Խիղճը շուարեցաւ այս ամբաստանութեան դիմաց, որովհետեւ ինք բոլորովին անմեղ էր: Յետոյ սակայն, մտածելով որ ամէն մարդ իր նեղութեան օրերուն իր բարեկամներուն կը դիմէ, ինք ալ որոշեց իր բարեկամներէն օգնութիւն խնդրել:

Ան իր երեք բարեկամներն ալ տուն կանչեց եւ ըսաւ անոնց.

- Անիրա կերպով ամբաստանուած եմ որպէս ոճրագործ: Դատարար սաստիկ բարկացած է ինծի դէմ: Կը խնդրեմ ձեր օգնութիւնը:

Բարեկամներէն առաջինը հրաժարեցաւ օգնութիւն բերելէ, պատճառաբանելով, թէ ինք շատ կարեւոր գործեր ունէր: Ան ըսաւ. Կը ցաւիմ, պիտի չկարենամ քեզի ընկերանալ:

Երկրորդը ընկերակցեցաւ խիղճ մարդուն, անոր հետ գնաց մինչեւ դատար-

րին պալատը, բայց ներս չմտաւ:

Ան ըսաւ. Կը վախճամ բարկացած դատարարին դիմաց ելլելէ:

Երրորդը, որուն սիրտն կը տարակուսէր, ընկերացաւ իրեն մինչեւ դատարարին առեւտրը եւ քաջութեամբ պաշտպանեց զինք: Ան այնքան ճարտասան ու անկեղծ կերպով խօսեցաւ, որ դատարարը անձեցաւ մարդուն անմեղութիւնը եւ ազատ արձակեց զայն:

\*\*\*  
Ամէն մարդ ունի երեք բարեկամներ: Իր առաջին սիրելի բարեկամներն են հարստութիւնները, երկրորդը՝ ազգականները, իսկ երրորդը՝ իր բարի գործերը:

Բայց չէ որ գէշ օրերու ընթացքին, է որ յայտնի կը դառնայ մարդուն ճշմարիտ բարեկամը: Երբ մարդ արարածը մեռնի եւ Աստուծոյ դատաստանին ներկայանայ, ամէնէն առաջ իր հարստութիւններն են, որոնք կը լքեն զինք: Ազգականները կ'երթան մինչեւ գերեզման եւ ետ կը դառնան: Միայն բարի գործերն են, որոնք մարդուն կ'ընկերանան մինչեւ Աստուծոյ առեւտրը եւ կ'արդարացնեն զայն:

**Բանաստեղծութիւն**

**ԱՐԹՆՑԷՔ**

Արթնքը դաշտեր,  
Գարուն է եկեր,  
Բերքեր է ձեզ հիւր՝  
Սիրուն թռչուններ:

Երկիրը պայծառ  
Կապեր է կամար,  
Կապոյտ վրան է  
Լարեր ձեզ համար:

Ծողերն արեւին  
Կը ժպտին խաղալ,

Անձրեւներ վերէն  
Կը տեղան գոհար:

Ելէ՛ք արթնցէ՛ք,  
Ու գարարտեցէ՛ք,  
Քնքոյ կանանչով  
Դուք վերմակ հագէ՛ք:

Գարուն է եկեր  
Երգով ու կանչով:

ԱՌԱԲԵԿ ԽՆԿՈՅԵԱՆ